

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐԸԻ ԶԵԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ-ԲՆ-ԴԵ-18/06**

ք. Երևան

«12» «փետրվարի» 2018թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Վ.Գևորգյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական միջոցառումներ» ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 11 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական միջոցառումների իրականացում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև 141 270 200 (հարյուր քառասուննեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N\*1-ում:

### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**
  - 2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:
  - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը:
  - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
    - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
    - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
    - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:
  - 2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
  - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իր հասանելիք գումարը:
  - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
  - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը:
  - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ:
  - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:
  - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:
- 2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**
  - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:



- 2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.
- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
- 2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
- 2.4.8. սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

### 3. Մոնիթորինգը

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

### 4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Սույն պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
  - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
  - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է սույն պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
  - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել սուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, սուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

### 6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված №2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողությունները Կազմակերպությունը ուղղում է իր կանոնադրական գործառույթների իրականացմանը:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն պայմանագրի Հավելվածներ №№1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«ՀՀ բնապահպանության նախարարություն»  
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք  
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
ՀՀ 900011000891  
ՀՎՀՀ 02507198

«ՀՀ բնապահպանության նախարարության  
աշխատակազմի ղեկավար  
Վահան Բախչյան»



### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ


«Ձանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ  
Սյունիքի մարզ, ք.Կապան  
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ «Կապան» մ/6  
ՀՀ 16022019829700  
ՀՎՀՀ 09423966

«Ձանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ  
տնօրեն  
Վ.Գևորգյան

(ստորագրություն)  
Վ.Տ.



*Handwritten signatures and stamps at the bottom left of the page.*



**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՅՈՒՆ**  
 «Զանգեզուր» կենսալրտալիս հեմալիթ» ՊՈԱԿ-ի  
 տնօրեն  
**Վ. Գևորգյան**  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՆՈՒՄՆԵՐ

NN Ը/Կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջա- ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ծառանցության պահպանություն, հավաիրդենային միջոցառումների իրականացում	1. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում և պահպանման գոտիներում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում (79038.70 հա): 2. ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի («Արևիկ», «Շիկահող», «Զանգեզուր») տարածքներում անցնող ավտոճանապարհներին վայրի կենդանիների հայտնվելու և տեղաշարժերի մասին նախագրուշացնող ցուցանակների տեղադրում (5 հատ) և վերանորոգում (5 անգամ): ՊՈԱԿ-ի ԲՀՊ-ներում տեղադրված ուղեփակցների նորոգում (4 անգամ): Մասնաճյուղերում որսը և ծառահատումները արգելող ցուցանակների նորոգում (2 անգամ): 3. Հրդենային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդենային ճանապարհների ընթացիկ նորոգում: Հակահրդենային Նշանակություն ունեցող ցուցանակների նորոգում, պատրաստում և տեղադրում: Համագործակցություն տեղական և ինքնաուսուցանման մարմինների հետ՝ ներգրավելով կրթության ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքների պահպանության և հակահրդենային միջոցառումների իրականացմանը 4. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում: 5. Հարող բնակավայրերի բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն, էկոլոգատարակցություն:	1. Պահպանության միջոցառումների անցկացում՝ աշխատանքների կողմից ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում ստուգումների և շտրջորյա հերթապահությունների միջոցով: 2. Բացարդական և շարժական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն 3. Հրդենների կանխարգելում: 4. Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում ստուգումների և շտրջորյա հերթապահությունների անցկացում: 5. Էկոլոգիական իրազեկության և էկոլոգատարակցության նպատակով հարող բնակավայրերի բնակչության հետ հանդիպումների կազմակերպում:	պատշաճ պահպանության ապահովում, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում, հաշվետվություններ, վերլուծություններ և ընկերակցություն:	01.01.2018թ. 31.12.2018թ.	98 889 140
2	Գիտական միջոցառումներ	1. ՀՀ ԳԱԱ /և միջազգային (WWF, CIPF) կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում. ա) կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման համար նախարդյանների ապահովում, բ) բարձրակարգ անոթավոր քույտերի տեսակային կազմի գույքագրում և	Հավաստի տվյալների ձեռքբերում, դիտարկումների, դաշտային ուսումնասիրությունների, հազվագյուտ և անհետացող տեսակների հաշվառումների և մոնիտորինգի իրականացում	1. Նոր ցուցանիշների արկայություններ, ներառյալ նոր տեսակային կազմի համարված անվանացանկը:	01.01.2018թ. 31.12.2018թ.	24 015 934

	որոշ խմբերի հաշվառում, գ) որևէադարձոր կենդանիների որոշ տեսակների հաշվառում և ենթակա վիճակի վերլուծություն (մոֆրոն, վայրի խոզ, այծյա, բեզուրյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորախակալ ընձառյուծ), դ) անտառաշար կենդանիների որոշ խմբերի գույքագրում: 2. «Սև լիճ», «Բողբոջար», «Խոտտուփ» պետական արգելավայրերի կենդանական աշխարհի որոշ կարգաբանական խմբերի ուսումնասիրություն, հազվագյուտ և անհետացող տեսակների հաշվառում, գույքագրման ցուցանիշների լրացում 3. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքների վերաբերյալ ուղեցույցների, բուկետների և ֆոտոալբոմների պատրաստում և սպազարում:		2. Լրամշակված գիտական տվյալների արկայություն 3. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքների վերաբերյալ ուղեցույցների, բուկետների և ֆոտոալբոմների արկայություն			
3	Էկոտուրիզմի զարգացման ուղղված միջոցառումներ	Պետական արգելոցի, ազգային պարկի և արգելավայրերի էկոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակում	Այսպեսպես էկոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակում և իրականացում կազմակերպություններին	Էկոտուրիզմի կազմակերպման և զարգացման ծրագրեր Այցելուների թվաքանակի ավելացում	01.01.2018թ. 31.12.2018թ.	7 063 510
4	«Սոսու պորակ» պետական արգելավայրի վերականգնման միջոցառումների իրականացում	1) Արևելյան սոսու և հունական ընկուզետու բնական վերածը ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական աշխատանքների իրականացում. 2) Արգելավայրի պահպանման գոտում աճող արևելյան սոսու և հունական ընկուզետու բնական վերածի տնկիներով, ինչպես նաև տեղաբնակում աճեցված տնկիներով արգելավայրի ծառազուրկ տարածքների ծառապատում. 3) Արգելավայրի ներտարածքային ճանապարհների բարելավում. 4) Ներքին Հանր և Ծավ համայնքների բնակչության հետ հակատարությունները մեղմացնելու նպատակով արգելավայրի մի շարք տարածքներում անասունների համար անցողիկների առանձնացում, նախապատրաստում և ցանկապատում. 5) Արգելավայրի տարածքում անտառտնտեսական միջոցառումների իրականացում:	Բնական վերածի ապահովում ծառազուրկ տարածքներում ծառատնկ, ծառատնակների լիարժեք կազմի ապահովում, անտառտնտեսական միջոցառումների իրականացում	Ծառատնակների լիարժեք կազմի ապահովում, Արգելավայրի մի շարք տարածքներում ի բարելավող ճանապարհների և անտառտնկների համար առանձնացված անցողիկների արկայություն	01.01.2018թ. 31.12.2018թ.	11 301 616

ԸՆԴԱՄԵՆԸ

141 270 200



ԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ  
 Բնության պահպանության նախարարության  
 հաստատված ղեկավար  
**Հ. Հովհաննիսյան**  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.

*[Handwritten signature]*

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի

տնօրեն  
**Վ. Գևորգյան**  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.

Հավելված N° 2  
 « Զ » « փետրվարի » 2018թ. կնքված  
 N° ՀՀ-ԲՆ-ԴԵ-18/06 պայմանագրի

**ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր**

Ծրագրային դասիչը	Անվանումը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող ԲՀՊ-ի տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական միջոցառումներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի	1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի
1155	ԱՅ 13 <b>Նկարագրություն</b> Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական միջոցառումների իրականացում								
<b>Չափորոշիչներ</b>									
Քանակական	ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի կանոնաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն/պաշտպանություն/ հա	79038.8	79038.8	79038.8	79038.8				
	Մարդու գործունեության հետևանքով ԲՀՊՏ բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, պարկի տարածքը, հա	79038.8	79038.8	79038.8	79038.8				
	ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում, ստուգումների քանակը		1	1	2				
	ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում բնական էկոհամակարգերի կենսաբազմազանության մոնիտորինգի անցկացում և յուրաքանչյուր եռամսյակի վերջում հաշվետվության ներկայացում, եռամսյակային հաշվետվությունների թիվը	1	2	3	4				

	1	2	3	4				
«Մուսիների պուրակ» ու «Զանգեզուր» պետական արգելավայրերում իրականացված անտառտնտեսական միջոցառումներ, հաշվետվությունների թիվը								
Որակական								
Ժամկետայնություն				գարնամային-ի-ոչ ձմ. սեզոնային ընդ-եռամսյակային				
Իրականացվող միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	X	X	X	X	25428.6	57920.7	96063.7	141270.2
<b>Ծրագիրը (ծրագրերը) որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</b>								
1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման միջոցառումներ								
<b>Վերջնական արդյունքի նկարագրությունը</b>								
Բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում								
<b>Միջոցառումն իրականացնողի անվանումը</b>								
«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ								